ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N1192-11005
ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

Քաղ. Երևան 27 հունվարի 2022 թ.

Հայաստանի Հանրապետության ԿԳՄՍ նախարարությունը, ի դեմս նախարարության գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող Վ. Գասպարյանի (այսուհետ՝ պետական մարմին), որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, մի կողմից, և ՀՀ բարձրագույն որակավորման կոմիտեն, ի դեմս նախագահ Կ. Քեռյանի (այսուհետ՝ կազմակերպություն), որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ կողմեր), հիմք ընդունելով <<Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի մասին>> ՀՀ օրենքը (այսուհետ՝ օրենք), օրենքով հաստատված 1192 - կրթության որակի ապահովում ծրագրի (այսուհետ՝ ծրագիր) 11005 - գիտական աստիճանաշնորհման և գիտամանկավարժական կոչումների շնորհում միջոցառման իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1. Սույն պայմանագրով պետական մարմինը պարտավորվում է ծրագրի իրականացման նպատակով կազմակերպությանը հատկացնել օրենքով նախատեսված հիսուներկու միլիոն ութ հարյուր քսանվեց հազար ինը հարյուր (52 826 900) դրամ գումար, իսկ կազմակերպությունը պարտավորվում է ծրագիրն իրականացնել օրենքով և սույն պայմանագրով սահմանված կարգով:

1.2. Ծրագրով նախատեսված կազմակերպության կողմից իրականացվելիք միջոցառումները (այսուհետ՝ միջոցառումներ) ներկայացված են սույն պայմանագրի հավելվածում:

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1. Պետական մարմինն իրավունք ունի՝

2.1.1. ցանկացած ժամանակ (այդ թվում՝ լիազոր մարմնի միջոցով) ստուգելու կազմակերպության կողմից իրականացվող միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

2.1.2. որոշմամբ սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում չընդունելու իրականացված միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և կազմակերպությունից պահանջելու վճարել սույն պայմանագրի 5.1-ին կետով նախատեսված տուգանքը.

2.1.3. առանց իրականացված միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

ա. կազմակերպությունը ժամանակին չի սկսում ծրագրի իրականացումը, կամ ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,

բ. կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է ծրագրով նախատեսված առանձին միջոցառումների իրականացման ժամկետները (միջոցառումների իրականացման ժամկետներ նախատեսված լինելու դեպքում),

գ. իրականացված միջոցառումները չեն համապատասխանում ծրագրով սահմանված պահանջներին.

2.1.4. սույն պայմանագիրն օրենքով կամ սույն պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ միջոցառումների արդյունքները:

2.2. Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1. իրականացված միջոցառման արդյունքը պետական մարմնի կողմից ընդունվելու դեպքում պահանջելու վճարել իրեն հասանելիք գումարը.

2.2.2. պետական մարմնի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները:

2.3. Պետական մարմինը պարտավոր է՝

2.3.1. ծրագրով նախատեսված դեպքերում աջակցել կազմակերպությանը.

2.3.2. կատարել ծրագրի (առանձին միջոցառումների) իրականացման մոնիթորինգ՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով այլ պետական կառավարման մարմինների հետ.

2.3.3. իրականացնել ծրագրով նախատեսված այլ աշխատանքներ.

2.4. Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1. իրականացնել ծրագրի շրջանակներում պետական մարմնի կողմից տրամադրված գումարների՝ Հայաստանի Հանրապետության հաշվապահական հաշվառման N 20 ստանդարտի դրույթներին համապատասխան հաշվառում.

2.4.2. պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել ծրագրով և (կամ) սույն պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով.

2.4.3. կատարել պետական մարմնի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները.

2.4.4. սույն պայմանագրով սահմանված կարգով պետական մարմին ներկայացնել միջոցառումների իրականացման մասին հաշվետվություններ, իսկ ծրագրի ավարտից հետո՝ ամփոփ հաշվետվություն.

2.4.6. սույն պայմանագրի գործողության ընթացքում ապահովել ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու պետական մարմնի հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում.

2.4.7. պետական մարմնի կողմից առանձին միջոցառումների իրականացման մասին հաշվետվությունները չընդունվելու դեպքում կազմակերպությունը պարտավորվում է անվճար՝ պետական մարմնի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել արձանագրված անհամապատասխանությունները.

3. Մոնիթորինգը

3.1. Պետական մարմինը ծրագրի իրականացման նախնական, ընթացիկ և վերջնական արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով իրականացնում է մոնիթորինգ:

3.2. Մոնիթորինգն իրականացվում է պետական մարմնի և (կամ) նրա կողմից լիազորված անձի կողմից:

3.3. Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով կազմակերպությանը տրվում են ցուցումներ, և կատարվում են առաջարկություններ:

3.4. Պետական մարմինը ցանկացած ժամանակ կարող է ծրագրի շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով ծրագրին առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր:

3.5. Մոնիթորինգի իրականացման ընթացքում կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

4. Վճարման կարգը և ժամկետները

4.1. Կազմակերպությանը վճարումները կատարվում են միջոցառումների իրականացման մասին հաշվետվությունն ընդունվելու օրվան հաջորդող 20 աշխատանքային օրվա ընթացքում, եթե ծրագրով սահմանված չեն վճարումների կատարման այլ կարգ և (կամ) ժամկետներ:

5. Կողմերի պատասխանատվությունը

5.1. Սույն պայմանագրով և ծրագրով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում կազմակերպությունը պարտավորվում է պետական մարմնին փոխհատուցել չիրականացված միջոցառման չափով և վճարել տուգանք՝ չիրականացված միջոցառման համար նախատեսված գումարի 1 տոկոսի չափով: Ընդ որում, տուգանքի վճարումը կազմակերպությանը չի ազատում իր պարտավորությունները կատարելու և խախտումները վերացնելու պարտականությունից: Պետական մարմինը սույն կետով նախատեսված գումարները հաշվարկում և հաշվանցում է կազմակերպությանը վճարվելիք գումարներից:

6. Պայմանագրի գործողության ժամկետը

6.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի ստանձնած պարտավորությունների՝ ամբողջ ծավալով կատարումը:

7. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

7.1. Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. Եզրափակիչ դրույթներ

8.1. Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հաստատված ծրագիրը հանդիսանում է սույն պայմանագրի անբաժանելի մասը:

8.2. Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են կողմերի կողմից:

8.3. Պայմանագիրը կնքվում է պայմանագրի կողմերի թվին համապատասխան թվով օրինակով, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

8.4. Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև սույն պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ	ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	ՀՀ Բարձրագույն որակավորման կոմիտե
ք. Երևան, Վ. Սարգսյան 3, Կառավարական տուն 2	ք. Երևան, Կիևյան 16
ՀՀՖՆ ԿԳ Գործառնական վարչություն	ՀՀՖՆ ԿԳ Գործառնական վարչություն
Հ/Հ 900001226522	Հ/Հ 900011034015
Նախարարության գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող՝ ---------- Վ. Գասպարյան	Կոմիտեի նախագահ՝ ---------- Կ. Քեռյան
Կ.Տ	Կ.Տ

02698732

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

Հավելված

NN ը/կ	Իրականացվելիք միջոցառման				
	անվանումը	համառոտ բովանդակությունը	Գործառույթների նկարագիրը և ակնկալվող արդյունքները	վերջնա-ժամկետը	պահանջվող /կանխատեսվող/ գումարը (դրամ)
1.	Գիտական աստիճանաշնորհման գործընթաց	Կանխատեսվող շուրջ 300 ատենախոսության պաշտպանություն,	Պաշտպանությունների ծախսերի հատուցում /մասնագիտական խորհուրդների նախագահներ, գիտքարտուղարներ, եռյակ-անդամներ, ընդդիմախոսներ/	30.12.2022թ.	22 000 000,0
2.	Կարծիքներ մասնագետներից ատենախոսությունների համար	Ատենախոսությունների մասին կարծիքների ստացում	Գիտական աստիճանների համար ներկայացված աշխատանքների եզրակացություններ	30.12.2022թ.	3 500 000,0
3.	Սեղմագրերի և տեղեկագրերի տպագրություն, վկայագրերի պատրաստում	Սեղմագրերի և ԲՈԿ-ի տեղեկագրի տպագրություն, գիտական աստիճանների և կոչումների վկայագրերի պատրաստում	Սեղմագրերի տպագրության կազմակերպում կոնկրետ տպարանի հետ, տեղեկագրի տպագրություն, գիտական աստիճանների և կոչումների վկայագրերի պատրաստում	30.12.2022թ.	1 500 000,0
4.	Նմանատիպ տեքստերի որոնման և բացահայտման ծրագրի կատարելագործում և հզորացում	Առկա ծրագրի կատարելագործում և հզորացում	Ատենախոսությունների որակի բարձրացում	30.12.2022թ.	3 000 000,0
5.	Գիտնականների և հայցորդների գործունեության, ատենախոսությունների հրապարակային պաշտպանությունների միասնական պորտալի կատարելագործում, տեխնիկական հագեցում և շահագործում	Ատենախոսությունների հրապարակային պաշտպանությունների անցկացում	Ատենախոսությունների որակի բարձրացում	30.12.2022թ.	5 000 000,0
6.	Պայմանագրային աշխատանքային խմբերի ձևավորում	Աստիճանաշնորհման կանոնակարգի վերամշակում	Արդի պահանջներին համապատասխան աստիճանաշնորհման կանոնակարգ	30.12.2022թ.	3 000 000,0
7.	Արխիվացում	Որակավորման գործերի արխիվացում	Որակավորման գործերի արխիվացման կազմակերպում /գործերի պատրաստում, հանձնում/	30.12.2022թ.	420 000,0
8.	Պայմանագրային աշխատանքներ	Ծրագրի որոշակի գործընթացների համար պայմանագրային աշխատանքներ	Կանոնակարգով նախա - տեսված և ընթացիկ անհրաժեշտ աշխատանքների իրականացում	30.12.2022թ.	8 500 000,0
9.	Բուհերի, ասպիրանտների և հայցորդների համար գործընթացի պարզաբանում և գիտական գրագիտության մակարդակի բարձրացման աշխատանքներ	Սեմինարների, գիտաժողովների անցկացում, նյութերի պատրաստում	Որակի բարձրացում և թափանցիկություն	30.12.2022թ.	580 000,0
10.	Տեխնիկական վերազինում և համալրում	Ծրագրերի կատարելագործում և հզորացում	Որակի բարձրացում և թափանցիկություն	30.12.2022թ.	5 000 000,0
11.	Այլ ծախսեր			30.12.2022թ.	326 900,0

Ընդամենը **52 826 900,0 դրամ**

Նախարարության գլխավոր քարտուղարի

պարտականությունները կատարող՝ ---------- Վ. Գասպարյան

Կ.Տ

Կոմիտեի նախագահ՝

---------- Կ. Քեռյան

Կ.Տ